

**«Հայաստանի Հանրապետության  
վարչատարածքային բաժանման մասին»  
Հայաստանի Հանրապետության օրենքում  
փոփոխություններ և լրացումներ կատարելու  
մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին»  
Հայաստանի Հանրապետության օրենքում  
փոփոխություններ կատարելու մասին»**

ՆԱԽԱԳԻԾ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՕՐԵՆՔԸ**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ»  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ  
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի հանրապետության 1995 թվականի նոյեմբերի 7-ի ՀՕ-18 օրենքի (այսուհետ՝ Օրենք) հավելված 2-ի 2.4-ի բաժնի 23-րդ, 2.5-րդ բաժնի 43-րդ, 2.6-րդ բաժնի 65-րդ և 2.10-րդ բաժնի 1-ին կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

**«Մարզի անվանումը**  
Գեղարքունիք

**Համայնքի անվանումը**  
23. Գեղամասար

**Բնակավայրի անվանումը**  
Գեղամասար գյուղ  
Ազատ գյուղ  
Ավազան գյուղ  
Արեգունի գյուղ  
Արփունք գյուղ  
Գեղամաբակ գյուղ  
Դարանակ գյուղ  
Զառիվեր գյուղ  
Կախակն գյուղ  
Կուրթ գյուղ  
Կուտական գյուղ  
Նորաբակ գյուղ  
Շատչրեք գյուղ  
Շատվան գյուղ  
Ջաղացաձոր գյուղ  
Սոթք գյուղ  
Տրետուք գյուղ  
Փամբակ գյուղ  
Փոքր Մասրիկ գյուղ  
Լերմոնտովո գյուղ  
Անտառաշեն գյուղ

Լոռի

43. Լերմոնտովո

Կոտայք

65. Քասախ

1. Իջևան

Քասախ գյուղ  
Պռոշյան գյուղ  
Իջևան քաղաք  
Ազատամուտ գյուղ  
Ակնաղբյուր գյուղ  
Աճարկուտ գյուղ  
Այգեհովիտ գյուղ  
Աջաջուր գյուղ  
Բարխուդարլու գյ  
Բերքաբեր գյուղ  
Գանձաքար գյուղ  
Գետահովիտ գյուղ  
Դիտավան գյուղ  
Ենոքավան գյուղ  
Լուսահովիտ գյուղ  
Լուսաձոր գյուղ  
Խաչթառակ գյուղ  
Ճաղկավան (Իջև  
Կայան գյուղ  
Կիրանց գյուղ  
Սարիգյուղ գյուղ  
Սևքար գյուղ  
Վազաշեն գյուղ

**Հոդված 2.** Ուժը կորցրած ճանաչել օրենքի հավելված 2-ի 2.6-րդ բաժնի 53-րդ, 2.10-րդ բաժնի 5-րդ, 6-րդ, 8-րդ, 9-րդ, 13-րդ, 20-րդ, 21-րդ, 22-րդ, 26-րդ, 28-րդ, 33-րդ, 34-րդ, 35-րդ, 37-րդ, 39-րդ, 57-րդ, 58-րդ, 59-րդ կետերը:

**Հոդված 3.** Օրենքի հավելված 16.32-ը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

**«Հավելված 16.32**

**«Հայաստանի Հանրապետության**

**վարչատարածքային բաժանման մասին»**

**Հայաստանի Հանրապետության օրենքի**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ»**

**Հոդված 4.** Օրենքը լրացնել 18.54-րդ հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 18.54. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևան համայնքի վարչական սահմանների նկարագրությունը

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևան համայնքի վարչական սահմանների նկարագրությունը տրվում է սույն օրենքի բաղկացուցիչ մաս

կազմող հավելված 18.54-ում:»:

**Հոդված 5. Օրենքի հավելված 8.42-ը շարադրել հետևյալ խմբագրությամբ.**

**«Հավելված 8.42**

**«Հայաստանի Հանրապետության**

**վարչատարածքային բաժանման մասին»**

**Հայաստանի Հանրապետության օրենքի**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ»**

**Հոդված 6.** Օրենքը լրացնել 18.54-րդ հավելվածով` հետևյալ բովանդակությամբ.

**«Հավելված 18.54**

**«Հայաստանի Հանրապետության**

**վարչատարածքային բաժանման մասին»**

**Հայաստանի Հանրապետության օրենքի**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻԶԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ»**

**Հոդված 7. Օրենքի 8.34, 16.13-րդ, 18.2-րդ, 18.3-րդ, 18.5-րդ, 18.6-րդ, 18.8-րդ, 18.14-րդ, 18.15-րդ, 18.17-րդ, 18.19-րդ, 18.24-րդ, 18.25-րդ, 18.26-րդ, 18.28-րդ, 18.29-րդ, 18.45-րդ, 18.46-րդ, 18.47-րդ հոդվածները և հավելվածներն ուժը կորցրած ճանաչել:**

**Հոդված 8.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԻԾ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՕՐԵՆՔԸ**

**«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի մայիսի 7-ի ՀՕ-337 օրենքի 102-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո, Կոտայքի մարզի Քասախ, Տավուշի մարզի Իջևան համայնքներում 2020 թվականի մարտի 15-ին անցկացնել համայնքների ղեկավարների և ավագանու անդամների ընտրություններ՝ «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների անցկացման կարգով: Ընտրությունների արդյունքների պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո, Անտառաշեն, Կոտայքի մարզի Քասախ, Պոռչյան, Տավուշի մարզի Իջևան, Ագատամուտ, Ակնաղբյուր, Աճարկուտ, Այգեհովիտ, Աչաջուր, Բերքաբեր, Գանձաքար, Գետահովիտ, Դիտավան, Ենոքավան, Լուսահովիտ, Լուսաձոր, Խաչթառակ, Ծաղկավան (Իջևանի շրջ.), Կիրանց, Սարիգյուղ, Սևքար, Վազաշեն համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները համարվում են դադարած. այդ նույն օրը միավորված համայնքների տեղական ինքնակառավարման մարմինները ստանձնում են իրենց լիազորությունները:

4. Սույն հոդվածի 3-րդ մասում նշված՝ օրենքով միավորվող համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններից հետո միավորվող համայնքները համարվում են վերակազմակերպված որպես մեկ համայնք՝ «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված անվանմամբ և համայնքային կենտրոնով: Միավորված համայնքը համարվում է միավորվող համայնքների իրավահաջորդը:»:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: